

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2014-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՉԵԿՈՒՅՑԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

„ՀՀ Արագածոտնի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործում է 119 հանրակրթական դպրոց, որից 79-ը՝ միջնակարգ, 40-ը՝ հիմնական, 1 հատուկ, 1 մարզադպրոց: 2013-2014 ուսումնական տարում ՀՀ Արագածոտնի մարզում գործող հանրակրթական դպրոցներում ձևավորվել էր 1206 դասարան՝ 16712 աշակերտով: Առաջին դասարան էր ընդունվել 1676 աշակերտ:

2014-2015 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներում ձևավորվելու է 202 դասարան, 16745 աշակերտով և 118 առաջին դասարան, որտեղ կհաճախի 1815 աշակերտ: 2013-2014 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներ ընդունվել և համապատասխան աջակցություն է ստացել սիրիահայ 3 երեխա:

Մարզի 39 դպրոց ունի տարրական, հիմնական, 71-ը՝ տարրական, հիմնական. միջնակարգ կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիա: 2014թ. մարտի 24 ՀՀ ԿԳ նախարարի 207-Ա/Բ հրամանով ՀՀ Արագածոտնի մարզի Բազմադրյուրի, Օրգովի, Պարտիզակի, Կաթավաձորի, Ոսկեթասի, Ակունքի, Իրինդի, Կարմրաշենի, Եղիպատրուշի, Աշնակի, Չարինջայի, Կաթնաղբյուրի, Մաստարայի, Լեռնապարի, Կայքի, Սասունիկի միջնակարգ դպրոցները ստացել են տարրական, հիմնական, միջնակարգ կրթություն իրականացնելու լիցենզիա: Աշտարակի թիվ 1, Դիանի, Եղնիկի, Ավշենի, Շամիրամի, Ջամշուկի, Սադունցի հիմնական դպրոցները ստացել են տարրական, հիմնական կրթություն իրականացնելու լիցենզիա:

2014 թ. ՀՀ Արագածոտնի մարզում գործող 9 հանրակրթական դպրոց, որոնք չունեին անշարժ գույքի վկայականներ աշխատանքներ են տարել անշարժ գույքի վկայականներ ձեռք բերելու նպատակով: 7 հանրակրթական դպրոց ձեռք է բերել անշարժ գույքի վկայական և դիմել է ՀՀ ԿԳՆ լիցենզիա ստանալու համար, իսկ Կարինի միջնակարգ և Օշականի Փայլակ Բաբկենյանի անվան հիմնական դպրոցների անշարժ գույքի վկայականների ձեռք բերման աշխատանքները ընթացքի մեջ է:

ՀՀ Արագածոտնի մարզպետի 2014թ.փետրվարի 25 թիվ 19 –Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիսի միջնակարգ դպրոցի նոր կանոնադրությունը, ըստ որի դպրոցը անվանակոչվել է „Վարդենիսի Չալիբեկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց,, ՊՈԱԿ:

ՀՀ Արագածոտնի մարզպետի 2014թ. մարտի 25-ի 37Ա կարգադրությամբ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից կատարվեց 20 հանրակրթական դպրոցներում առարկայական դրվածքի ուսումնասիրություն:

Արդյունքների քննարկման ընթացքում որոշ դպրոցների տնօրենների տրվեցին հանձնարարականներ բացթողումները լրացնելու համար:

2014թ. ապրիլ ամսից ՀՀ Արագածոտնի մարզի բոլոր հանրակրթական դպրոցները ընդգրկվել են dasar.am կայքում: 2013-2014 ուսումնական տարում Ոսկեվազի, Ուշանի Չորավար Անդրանիկի, Շամիրամի Ուսուբ բեկի անվան դպրոցից 2 աշակերտ, Աշտարակի Սմբատ Շահազիզի անվան թիվ 2 և Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան հիմնական դպրոցների թվով 6 աշակերտ հաղթել է dasar.am-ի կողմից հայտարարած մրցույթում: Աշտարակի թիվ 1, Ապարանի թիվ 1, Մուղղու հիմնական, Նոր Ամանոսի, Բազմադրյուրի, Արուճի, Ղազարավանի միջնակարգ դպրոցները dasar.am-ի կողմից ճանաչվել են հաղթող դպրոցներ և արժանացել մրցանակի:

Մարզի 58 հանրակրթական դպրոցում առկա են զենքի պահպանման սենյակներ, որոնք ապահովված են ուսումնական զենք- զինամթերքով: Աշխատանքներ են տարվում մարզում 2014թ.

ավելացնել գենքի պահպանման սենյակների և ռազմամարզական հրապարակների քանակը: Մարզային ենթակայության 4 դպրոցներում գործում է „ Մենամարտ վարժասարքը,,: 2013-2014 թվականներին վերապատրաստվել 18 դպրոցների զինվորական ղեկավար: Անչափահասների քաղաքացիական դաստիարակության, նրանց իրավական գիտելիքների իմացության բարձրացման նպատակով, 2014 թվականի ապրիլի 25-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցները մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացրել են հանդիպումներ՝ „Դասը վարում է ոստիկանը,, խորագրով միջոցառումը: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներ: Մարզի հանրակրթական դպրոցները սերտ համագործակցության մեջ են ոստիկանության մարզային կառույցների անչափահասների բաժնի աշխատակիցների հետ: ՀՀ Կառավարության 2012թ.դեկտեմբերի 22 –ի N 1473-Ա որոշմամբ ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցով կատարված աշխատանքների մասին պարբերաբար՝ եռամսյակը 1 անգամ, ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն է ներկայացվում հաշվետվություն կատարված աշխատանքների մասին:

ՀՀ Արագածոտնի մարզի 3 հանրակրթական՝ Աշտարակի Ն. Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական , Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ, Թալինի թիվ 2, Ապարանի թիվ 1 դպրոցները ընդգրկված են „ Դպրոց կենտրոններ ,, իրավաբանական ծրագրում: Նշված դպրոցները բավականին լուրջ աշխատանքներ են տանում մարզում գործող հանրակրթական դպրոցների հետ, իրականացնում են դասավանդման և ուսումնառության որակի բարելավման, մասնագիտական կարիքներին ուղղված վերապատրաստման դասընթացներ, նպաստում են հանրակրթության բնագավառում համակարգի զարգացման հեռանկարների և գերակա ուղղությունների միջոցառումների մշակմանը, ուսումնասիրությունների միջոցով բացահայտում, վերլուծում են կրթական հիմնախնդիրը և կարիքները, նպաստում են մանկավարժների մասնագիտական վարկանիշի բարձրացմանը, աջակցում են կառավարման հմտությունների զարգացմանը ուղղված դպրոցների վարչական անձնակազմի վերապատրաստումների իրականացմանը, խթանում դպրոցական նորարարությունների տարածման և իրականացման գործընթացին:

Հատուկ դպրոցը լիցենզավորվել և իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական ծրագրեր: 2013-2014 ուսումնական տարում Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցում կոմպլեկտավորվել է 8 դասարան՝ 48 աշակերտով, առաջին դասարան է հաճախել 8 աշակերտ, որոնք ունեն բժշկամանկավարժահոգեբանական եզրակացություն և վկայագիր: Կրթության հետ տարվում է տնային ուսուցում ուսումնական ծրագրերին համապատասխան:

2013 թվականին 17, 2014 թվականին՝ 10 հանրակրթական դպրոցում հայտարարվել և կազմակերպվել է դպրոցի տնօրենի թափուր տեղի մրցույթ: 2 դպրոցի մրցույթի հաղթող մասնակիցների՝ Արագածոտնի միջնակարգ և Աշտարակի Պ.Պռոշյանի անվան թիվ 3 դպրոցների տնօրենների հետ մարզպետի կողմից կնքվել է աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով: Մեծածորի, Դիանի, Արևուտի, Հակո հիմնական, Իրինդի, Սիփանի, Զուչակի, Ակունքի միջնակարգ դպրոցների տնօրենի թափուր տեղի համար պարբերաբար հայտարարվում են մրցույթներ, որոնք չեն կայանում հավակնորդների բացակայության պատճառով:

2013-2014 ուսումնական տարում ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ դպրոցական աշխատանքները ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական տույժի է ենթարկվել Լուսազյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Էդիկ Բաղդասարյանը, Սասունիկի Գ. Չաուչի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Մուշեղ Գալստյանը, Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Արիստակ Միքայելյանը, Արտաշավանի Գ. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Մարգո Գևորգյանը:

Մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 2347 մանկավարժ: 2010 թվականի հոկտեմբերի 25-ից ուսուցչի թափուր պաշտոնները համալրվում են մրցութային կարգով, բացառությամբ նախապես գործուղված ուսուցիչների: Մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները ՀՀ Արագածոտնի մարզպետի գործուղմամբ մասնակցում են ԲՈՒՀ-երի հեռակա ուսուցման նպատակային տեղերի ընդունելության քննություններին:

2013 թվականին մարզի 94, 2014 թվականին՝ 43 հանրակրթական դպրոցում ՀՀ ԿԳ նախարարի 2010թ.1262-Ն հրամանի համաձայն հայտարարվել է ուսուցչի թափուր տեղի մրցույթ՝ տարբեր առարկաներից: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների հետ դպրոցի տնօրենները կնքել են աշխատանքային պայմանագրեր օրենքով սահմանված կարգով: Պետք է նշել, որ որոշ դպրոցների տնօրենների կողմից անցած տարիների ընթացքում խախտվել է ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգը:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել և վարչության աշխատակիցների կողմից մարզպետի շրջաբերականով մարզի հանրակրթական դպրոցներին է տրամադրվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի մայիսի 5-ի 475 Ա/Ք հրամանով հաստատված «Ուսուցչի էթիկայի նորմերը» կիրառման պարտադիր պայմանով:

Սահմանված ժամկետում հավաքագրվել, ամփոփվել և ՀՀ ԿԳՆ են ներկայացվում նախնական և հիմնական կոմպլեկտավորումները: Կազմվել և համապատասխան գերատեսչություններին և ներկայացվում ՄԺԾԾ-ն:

ԿՄՍ վարչությունը 2013 թվականի հունվարից մինչև 2014 թվականի օգոստոս ստացել և պատասխանել է 2038 գրության, որից կրթության բաժինը՝ 1569, մշակույթի և սպորտի բաժինը՝ 469 գրության: Նույն ժամանակահատվածում ստացվել է 29 դիմում-բողոք: Բոլոր գրություններին նախատեսված ժամկետներում պատասխան է տրվել: Վարչության աշխատակիցների կողմից պահպանվել են գրությունների ժամկետները, որևէ գրություն չի չեղարկվել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից և այլ գերատեսչական հիմնարկներից ստացվել է 9 նախագիծ, որոշ նախագծերի քննարկմանը մասնակից են եղել նաև դպրոցների տնօրեններ: Ստացված նախագծերի վերաբերյալ մեր կողմից արվել են առաջարկություններ: Արագածոտնի մարզպետարանի կողմից արված առաջարկությունները ընդունվել են և մտել են արդարադատության կողմից հաստատվող կարգերում:

2014 թվականին 119 հանրակրթական դպրոցներից 90 դպրոցի անշարժ գույք հանձնվել է ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը: Մյուս հանրակրթական դպրոցների անշարժ գույքի սեփականության վկայականներում կատարվում է համապատասխան փոփոխություն:

ՀՀ Արագածոտնի մարզում գործում է համայնքային ենթակայության 25 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ձևավորվել է 79 խումբ՝ 2133 երեխայով: ՀՀ Արագածոտնի մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների բոլոր տնօրեններն ունեն բարձրագույն կրթություն: 2014 թվականի նախադպրոցական ուսումնական հաստատություն է բացվել Կոչ և Դավթաշեն համայնքներում:

ՀՀ Արագածոտնի մարզի 34 հանրակրթական դպրոցում գործում է նախակրթարան՝ 541 երեխայով, որտեղ իրականացվում է նախադպրոցական կրթություն՝ կրթական պետական չափորոշիչներին համապատասխան: 2013թ. Նիգավանի, Ծաղկաշենի, Թաթուլի, Բազմաղբյուրի Շամիրամի, Օհանավանի, Լուսագյուղի, Գեղածորի միջնակարգ դպրոցներում բացվել են նախակրթարաններ: Բյուրականի, Արտենի, Արագածավանի, Հացաշենի համայնքներում բացվել են համայնքային ենթակայության նախակրթարաններ: Շարունակական սշխատանքներ է տարվում նախակրթարաններ բացել այն համայնքներում, որտեղ չկան մանկապարտեզների շենքեր: ՀՀ Արագածոտնի մարզպետի ուշադրություն կենտրոնում են գտնվում մարզում բնակվող ազգային

փոքրամասնությունների նախադպրոցական տարիքի երեխաները: Դրա վառ օրինակն է Չարինջայի, Ծաղկահովիտի, Հացաշենի, Աղձքի, Արագածավանի, Ապարանի, Օշականի, Շամիրամի դպրոցներում և համայնքային ենթակայության նախակրթարաններում և մանկապրտեզներում ազգությամբ եզդի 41 երեխաների ընդգրկվածությունը:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից ստացվել և բաշխվել են նախադպրոցական կրթական մեթոդական ձեռնարկներ և ուսումնասովանողական այլ նյութեր: ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացվել է հայտ ՆՈՒՀ-երի մանկավարժական կադրերի վերապատրաստման համար: WORLD VISION բարեգործական կազմակերպության կողմից Թալինի տարածաշրջանի 17 ՆՈՒՀ մանկավարժ վերապատրաստվել է /ծրագիրը արժե 2 336.6 դրամ/: ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից ներկայացվել է առաջարկություն ՀՀ ԿԳ նախարարություն մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների և տնօրենների հետ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար:

2014թվականին ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի Արագածոտնի մասնաճյուղի կողմից մարզի 513 ուսուցիչի համար կազմակերպվել են նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ: 2011-2013թթ. պարզ ընթացակարգով /փաստաթղթային/ ատեստավորվել է 1459 ուսուցիչ: Որակավորման առաջին տարակարգ են ստացել Օշականի մ/դ 2 ուսուցիչ /ՀՀ ԿԳ նախարարի 28.12.14թ. թիվ 913-Ա, 21.08.14թ. թիվ 494-Ա հրամաններ/ և Շղարշիկի 1 ուսուցիչ/ ՀՀ ԿԳ նախարարի 28.03.14թ. թիվ 196-Ա հրաման/:

Մարզի հանրակրթական դպրոցների քիմիա, ֆիզիկա, գերմաներեն առարկաների ուսուցիչները և գրադարանավարները մասնակցել են „Անտարես“, հրատարակչության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Դասընթացների արդյունավետ կազմակերպման համար վարչության աշխատակիցները „Անտարես“, հրատարակչության գործադիր տնօրեն Ս.

Մարտիրոսյանի կողմից ստացել են շնորհակալագիր:

2014թվականի հունիսի 23-28-ը մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչները մասնակցել են Ֆրանսերեն դասավանդողների 12-րդ ամենամյա սեմինարին, որը կազմակերպվել է „Հայկական Ալիանս Ֆրանսեզ“, կրթամշակութային կազմակերպությունը և „Ֆրանսերեն դասավանդողների հայկական ասոցիացիան“, համատեղ, ՀՀ կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ:

Վերապատրաստման և որակավորման դասընթացներ են անցկացվել մարզում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների, գրադարանների, ակումբների աշխատողների համար: ՀՀ մշակույթի նախարարության մշակութային աջակցության կենտրոնի հետ համատեղ անցկացվել են փոխադարձ դասախոսներ և համերգներ, մանկավարժներին տրվել են մեթոդական օգնություններ:

Սովորողների ընդունելություն և տեղափոխությունը կազմակերպվում է ՀՀ ԿԳ նախարարի 2014թ դեկտեմբերի 24-ի 1640-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: 2013 թվականի հունվար ամսից մինչև հուլիս մարզի դպրոցներ են ընդունվել 152 և մարզի դպրոցներից հեռացել են 282 աշակերտ: Աշակերտների շարժը գրանցվում է կրթության բաժնում գործող գրանցամատյանում:

Մարզի հանրակրթական դպրոցների 1-ին դասարան են ընդունվում այն երեխաները, որոնց 6 տարին լրանում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը: Ծնողի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի հետ ներկայացնում է երեխայի պետական գրանցման մասին տեղեկանք անձնագրային բաժնից: Մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 30-ը ներառյալ դպրոցում հաշվառված երեխաները ընդգրկվում են տվյալ ուսումնական տարվա տարիֆիկացիոն ցուցակներում: Սեպտեմբերի 1-ին ընդունված աշակերտները տարիֆիկացիոն ցուցակ են մտնում հունվար ամսից սկսած: Վարչության աշխատակիցների կողմից լուրջ աշխատանքներ են տարվել 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների տվյալների գրանցման և նախնական 5 առարկայից քննությունների կազմակերպման ուղղությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի

2013թմարտի 28. թիվ 272-Ն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետը:

ՀՀ ԿԳ Նախարարի 2007թ. դեկտեմբերի 05-ի „Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկը հաստատելու մասին, Ն 428 ԱԶ հրամանում կատարված փոփոխության համաձայն 2014 թվականին ներառական կրթություն կիրականացվի ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում 11 աշակերտ և Աշտարակի Ն.Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոցում:

Յուրաքանչյուր կիսամյակ կրթության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվում է 119 հանրակրթական ուսումնական հաստատությունների, 1 հատուկ դպրոցի և 1 մարզադպրոցի տարիֆիկացիոն մատյանների, դպրոցի կառավարման խորհուրդների կողմից հավանության արժանացած հաստիքացուցակների ուսումնասիրում ՀՀ Արագածոտնի մարզպետի հաստատմանը ներկայացնելու աշխատանքները՝ 1-ին կիսամյակը մինչև սեպտեմբերի 20-ը, 2-րդ կիսամյակը՝ հունվարի 20-ը: 2013-2014 ուստարվա 2-րդ կիսամյակում տարիֆիկացիոն մատյանները հաստատվեցին հունվարի 23-ին՝ ՀՀ Կառավարության 16 հունվարի 2014 թվականի N 16-Ն որոշման համապատասխան փոփոխություններ կատարելու պատճառով: Վարչության աշխատակիցների կողմից ուսումնասիրվում է տարիֆիկացիոն մատյանների վարման, դասաժամերի, դպրոցական բաղադրիչների բաշխման համապատասխանությունը կարգին: Տարիֆիկացիոն մատյանները հաստատում է մարզպետը, դպրոցի կառավարման խորհրդի նախագահը դպրոցի տնօրենի կողմից կազմված հանձնաժողովի անդամները:

2014 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետ կողմից „Աշտարակի Ն.Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց, ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի ուսուցչուհի Լյուբով Իվանի Յովհաննիսյանը ներկայացվել է ՀՀ կառավարության, իսկ „Ներքին Բազմաբերդի Ե.Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ-ի դասվար Յերմինե Սարգսի Ստեփանյանը՝ ՀՀ վարչապետի պարզևատրման արժանացնելու համար:

ՀՀ ԿԳ Նախարարի կողմից կրթության և գիտության ոլորտում երկարամյա ավանդի համար հուշամեդալով պարգևատրվել է Ագարակավանի միջնակարգ դպրոցի դասվար Լարիսա Մարգարյանը, ՀՀ ԿԳ Նախարարի պատվոգրով պարգևատրվել է Ներքին Բազմաբերդի դասվար Սիրուշ Վարդանյանը:

Մարզպետի 2014թ. մարտի 23-ի թիվ 46-Ա կարգադրությամբ ստեղծվել է „Տարվա լավագույն տնօրեն,„, „Տարվա լավագույն ուսուցիչ,„, „Տարվա լավագույն դաստիարակ,„ մրցույթների մարզային փուլի գնահատող հանձնաժողովներ: 2013-2014 ուսումնական տարում տարվա լավագույն տնօրեն է ճանաչվել Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Աստղիկ Մկրտչյանը, տարվա լավագույն ուսուցիչ՝ Մերի Յունանյանը /Աշտարակի Ն. Աշտարակեցու անվան հիմնական դպրոց/, տարվա լավագույն դաստիարակչուհի՝ Սուսաննա Ավետիսյանը /Աշտարակի „Մանուշակ „ մանկապարտեզ/:

Մարզպետի 23.03.2014թ. թիվ 47-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ ԿԳՆ և Հայ Առաքելական եկեղեցու կողմից կազմակերպված „Լավագույն ուսուցիչ,„ մրցույթի մարզային փուլի գնահատող հանձնաժողով: Մրցույթում հաղթող ճանաչված հինգ ուսուցիչ՝ Լիլիթ Մալխասյան- դասվար /Աշտարակի Ն.Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց/ Հարություն Օհանյան - քնագիտական առարկաներ/ Աշտարակի Ն.Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց/ , Վարդիշաղ Համբարձումյան – ՀԵՊ /Օհանավանի Ա.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց/, Մարինե Մորիկյան –հայոց լեզու և հայ գրականություն/Ուշանի Չորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոց/, Լյուդմիլա Չաբարյան –պատմություն / Երևջատափի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց/ ներկայացվել են ՀՀ ԿԳ Նախարարություն՝ մրցույթի հանրապետական փուլին մասնակցելու համար: Պետք է նշեմ, որ այս տարի մրցույթին մասնակցում էր մարզի տարբեր հանրակրթական դպրոցների 47 ուսուցիչ :

Անրադառնալով կրթության ոլորտի կազմակերպման աշխատանքային պայմաններին նշեմ, որ

մարզի 49 դպրոց ստանում է լոկալ ջեռուցում, որից 15-ը հեղուկ վառելիքով, 34-ը բնական գազով: 70 դպրոց ջեռուցվում է էլեկտրականությամբ, հեղուկ վառելիքով/կան դպրոցներ, որոնք ջեռուցվում են և՛ էլեկտրականությամբ, և՛ հեղուկ վառելիքով/: Ջեռուցման խնդիրը շարունակվում է լուծում ստանալ դպրոցաշինության ծրագրերի իրականացման արդյունքում: 2014 թ պետական միջոցների հաշվին վերանորոգվել է Եղնիկի հիմնական, Դավթաշենի, Ձորագլխի, Վ. Բազմաբերդի միջնակարգ դպրոցները, որոնք սեպտեմբերի 1-ն իրենց հյուրընկալ դռները կբացեն աշակերտների առջև: 2014թ վերանորոգվել է աղետի հետևանքով վնասված Բազմադքյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոցի տանիքը: 2013 թվականին Փարպիի միջնակարգ դպրոցում պետական միջոցների հաշվին շինարարական աշխատանքներ է կատարվել, որը շարունակվում է 2014 թվականին: 2014 թվականի սեպտեմբերի 1-ին Գիտելիքի օրը իր դռները կբացի Լեռնապարի միջնակարգ դպրոցի նոր շենքը:

2013-2014 ուստարում մարզի 38 դպրոց ներգրավել ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի կողմից տրամադրվող „Դպրոցական տաք սնունդ,, ծրագրի մեջ: 2014-2015 ուսումնական տարում „Դպրոցական տաք սնունդ,, ծրագրից կարող են օգտվել ավելի մեծ թվով դպրոցներ, որոնք կունենան անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ:

2014 թվականին ԿՄՍ վարչության կողմից 33 ԿԳՆ-ից ստացվել և բաշխվել է. իջնակարգ կրթության 1161ատեստատ, որից 33 ԿԳՆ է վերադարձվել առանց անվան, հայրանվուն և ազգանվան 4 ատեստատ, բաշխվել է 1157 ատեստատ, հիմնական կրթության-1481 վկայական, հիմնական կրթության հատուկ նմուշի - 27 վկայական:

Գերազանցության վկայականները հանձնվում են դասամատյանների և թեստային առաջադրանքների ուսումնասիրությունից հետո: Զբաղիված վկայականները հետ կհանձնվեն 33 ԿԳ նախարարություն հաշվետվությունների ամփոփող ներկայացնելիս: Կրթության վարչության աշխատակիցների կողմից ժամանակին հավաքագրվել գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնվել պետական, ավարտական և միասնական քննությունները կազմակերպելու նպատակով մարզի հանրակրթական դպրոցների 9 և 12-րդ դասարանների աշակերտների տվյալները: Ավարտական քննությունները կազմակերպվել են 33 ԿԳ նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն: 2014 թվականին միասնական քննություններին մասնակցել է 529 աշակերտ, որից շատերը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ: Միասնական քննությունները անբավարար ասացած աշակերտների համար ժամանակին Գնահատման և թեստավորման կենտրոնից բերվել և համապատասխան դպրոցներում անց է կացվել վերաքննությունները: 2014 թվականի օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում անց է կացվել վերաքննությունների 2-րդ փուլը: Շենավանի, Գեղադիրի միջնակարգ դպրոցներում անց է կացվել բանակից զորացրված չորս հոգու 12-րդ դասարանի քննություն:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա դեկտեմբեր ամսին սկսվում է հանրապետական օլիմպիադաների դպրոցական փուլը: Դպրոցի տնօրենների կողմից ձևավորվում է դպրոցական օլիմպիադայի կազմակերպման հանձնաժողով, հաստատվում է ժամանակացույցը: 33 Արագածոտնի մարզպետի 2014թ. նոյեմբերի 7-ի թիվ 13-Ա կարգադրությամբ ստեղծվել է մարզային կազմկոմիտե, մարզային և տարածքային հանձնաժողովներ՝ օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը կազմակերպելու համար: 2014 թվականին մարզային փուլին մասնակցել է 360 աշակերտ:

2014 թվականի Ոսկեթասի միջնակարգ դպրոցի աշակերտը հայոց պատմություն առարկայից արժանացել է 1-ին կարգի դիպլոմի, Աշտարակի ավագ դպրոցի աշակերտուհին 2-րդ կարգի դիպլոմի, Գեղաձորի, Արագածավանի թիվ 1, Ոսկեվազի միջնակարգ դպրոցի աշակերտները տարբեր առարկաներից ատացել են գովասանագրեր: Ոսկեվազի միջնակարգ դպրոցի աշակերտը հուլիսի 14-19-ը ընկած ժամանակահատվածում Ծաղկաձորում մասնակցել է „Մաթեմատիկա և բնագիտական առարկաների,, համահայկական մրջազգային օլիմպիադային, որտեղ ևս ատացել է

աշխարհագրությունն առարկայից պատվոգիր: ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից այս աշխարհագրությունը նույնպես արժանացան պատվոգրի և խրախուսանքի:

Մարզի 119 հանրակրթական և 1 հատուկ դպրոցները ապահովված են ինտերնետային կապով, 84 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ: Ներկայումս դպրոցներում կա 800-ից անելի համակարգիչ:

2013-2014 ուսումնական տարվա համար ՀՀ Արագածոտնի մարզում ժամանակին ստացվել և բաշխվել 39620 դասագիրք և ուսուցչի ձեռնարկ: Մարզի համայնքներում գործող ազգային փոքրամասնությունների 19 դպրոցները ապահովված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից իրենց մայրենի լեզվով երաշխավորված համապատասխան դասագրքերով: 2014-2015 ուսումնական տարվա համար ներկայացվել է 1-4 դասարանների 31944, 5-9 դասարանների՝ 3228, 10-12 դասարանների՝ 6017 դասագրքի և ուսուցչի ձեռնարկի պահանջ:

2013 թվականի հունվարից մինչ օրս 15 հանրակրթական դպրոցի կառավարման խորհրդի կազմերում կատարվել են փոփոխություններ օրենքով սահմանված կարգով: Մարզի հանրակրթական հաստատություններում, գրեթե առանց բացառության, ձևական բնույթ են կրում կառավարման խորհուրդները, որոնք հիմնականում երևում են միայն հաստատությունների տնօրենների ընտրության դեպքում: Մնացած դեպքերում կառավարման մարմնի անդամներն իրենց հեռու են պահում դպրոցների ուսումնադաստիարակչական և այլ խնդիրներից: Դպրոցի կառավարման մարմինների անդամների համար հարկավոր է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ գործնական քայլերի միջոցով բարձրացնելով նրանց դերն ու նշանակությունը: 2014 թվականին մարզի հանրակրթական 70 միջնակարգ և 3 ավագ դպրոցների աշակերտներ մասնակցեցին Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայր այցելության ծրագրին: Աշակերտները եղան Նախագահի նստավայրում, Հոլի. Թումանյանի անվան տուն – թանգարանում, Հայաստանի պատմության թանգարանում:

2014թ. Օշական համայնքի Անժելա Շահնաբաթյանի անվան պարի խումբը մասնակցեց Թուրքմենստանում անցկացվող „Ավագա,, 5-րդ միջազգային մանկապատանեկան երաժշտական փառատոնին:

2013-2014 ուսումնական տարում ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցները ակտիվ մասնակցություն են դրսևորել „ Հայ Ասպետ ,, հեռուստախաղում: Աշտարակի Ն. Աշտարակեցու անվան թիվ 1 դպրոցի թիմը ճանաչվել է հաղթող՝ վաստակելով տարվա գավաթը և այլ պարագաներ: Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 դպրոցի 4-5-րդ դասարանների տարիքային խմբում գրավել են 1-ին տեղը, այցելել են Գորիս, իրավունք են ստացել հոկտեմբեր ամսին մասնակցելու հեռուստախաղի եզրափակիչ փուլին:

2014 թվականին ՀՀ Ազգային Ժողովի «Փարաջանովի հետադարձ լույսը» խորագրով ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների , արվեստի դպրոցների աշակերտները այցելել են Փարաջանովի տուն-թանգարան:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում իրականացվում է „Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցում» ծրագրով բյուջետային հատկացումների մոնիթորինգ, , մարզային և համայնքային ենթակայության գրադարաններին. մշակույթի տներին. թանգարաններին տրամադրվում է մեթոդական օգնություն: 2013-2014 ուսումնական տարում անցկացվել է մի շարք միջոցառումներ՝ „Մայրության և գեղեցկության տուն, , „ Ոսկե աշուն,, , „Ուսուցչի օր,, , Սուրբ Ծննդյան տոներին և Ամանորին նվիրված միջոցառում, ՀՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված մեծ միջոցառում, 2014թ. ընտանիքի տարի հայտարարելու և ընտանիքի տարվա կապակցությամբ միջոցառումներ, Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 69-րդ և Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձներին, „Թանգարանային հավաքածուների միջոցով են ստեղծվում կապեր խորագրով միջոցառումները, „Արագածոտնի մարզի պատմաճարտարապետական հուշարձանների պատմությունը,, թեմայով

վիկտորինա-դասախոսություն, ՀՀ ԿԳՆ և ՌԴ-ի հետ համատեղ անցկացվել է <<Живая классика>> 7-րդ դասարանցիների ընթերցանության մրցույթ, „Մեր մեծերը,, ծրագրի շրջանակներում մարզի գրեթե բոլոր դպրոցներում, գրադարաններում, երաժշտական և արվեստի դպրոցներում անցկացվել են միջոցառումներ՝ նվիրված Գալուստ Գյուլբենկյանին /145-ամյակ/, Արշիլ Գորկուն /110-ամյակ/, Սիամանթոյին /136-ամյակ/, Կոմիտասին /145-ամյակ/ և Հովհաննես Թումանյանին /145-ամյակ/: Երևանի և Արմավրի անվան համալսարանում կայացած Կոմիտասին 145 ամյակին նվիրված փառատոնին Կարբիի Վ. Թեթեյանի անվան միջնակարգ դպրոցի եռաձայն երգչախումբը արժանացել է բարձր պարգևի, կազմակերպվել են Բարեկենդան, Ծաղկազարդի տոն, Չատիկ, Վարդավառ, Խաչվերած ազգային ծեսերը, „Հայոց ազգային բանակի կազմավորման 21-րդ տարեդարձ,, „Սասնա ծռեր,, Եպոսյան օր, „Էրզրի համի հիշողություն, ազգային ուտեստների,, „Թանգարանը որպես ոչ ֆորմալ կրթության միջավայր,, „Վերածնունդ,, „Մինասի գույներով,, „Ոսկե աշուն,, եւ բազմաթիվ այլ միջոցառումներ, հանդիսություններ եւ տոնախմբություններ: Մարզում գործում է համայնքային ենթակայության 8 երաժշտական, 1 պարարվեստի, 1 գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ, 69 մշակույթի տուն ՀՈԱԿ: Բոլոր ՀՈԱԿ-ները ունեն իրենց կանոնադրությունը, տարեկան աշխատանքային պլանը, օրինակելի ուսումնական պլան, համապատասխան մեթոդական ձեռնարկներ ուղեցույցներ: Անհրաժեշտության դեպքում մեթոդական ցուցումներ են ստանում վարչության աշխատակիցների կողմից էլեկտրոնային և թղթային տարբերակով:

Մարզի մի շարք դպրոցներում անցկացվել են «Արագածոտնի մարզի պատմաճարտարապետական հուշարձանների պատմությունը» պատմաճանաչողական թեմայով դասախոսություններ: Բանակ-կրթություն-մշակույթ ոլորտների կապերն ամրապնդելու, մշակույթի և արվեստի միջոցով զինճառայողների և մատաղ սերնդի հոգում պատմամշակութային արժեքների ու ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունք արմատավորելու համար ապրիլի 18-ին հուշարձանների պահպանության միջազգային օրվա կապակցությամբ անցկացվել են միջոցառումներ՝ բանակ-դպրոց համագործակցությամբ: Պարբերաբար հայտարարվում և անցկացվում է պատմության և մշակույթի հուշարձանների տարածքների մաքրման և բարեկարգման աշխատանքներ: Ավանդույթ է դարձել „Պատմաճարտարապետական հուշարձանների պատմությունը,, խորագրով մարզի հանրակրթական դպրոցների միջև կազմակերպվող մրցույթները:

Ազգային արժեք համարվող մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունների պահպանման, տարածման և զարգացման ուղղությամբ մարզի հանրակրթական դպրոցներում, մշակույթի տներում գործում են արտադասարանական և արտադպրոցական խմբակներ՝ խեցեգործության, փայտի փորագրության, գորելենի, տակառագործության, ոսկերչության, արծաթյա զարդերի պատրաստման, գորգագործության, ժանյակագործության, քարերի մշակման: ՀՀ Արագածոտնի մարզը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով, որոնց պահպանումը գտնվում է մարզպետի ուշադրության կենտրոնում:

2014թ. ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից ֆինանսական աջակցություն ցուցաբերելու շնորհիվ ՀՀ պետական խորհրդակիշների օրվան նվիրված տոնական միջոցառումներին մասնակցեց Ոսկեվազի միջնակարգ դպրոցը: Այժմ մարզի 3 պատանի նկարիչ Գյումրիում մասնակցում են “Մինասի գույներով” միջոցառմանը:

ՀՀ վարչապետի 2014.02.10 Ա 85 որոշման հիման վրա ՀՀ Արագածոտնի մարզպետի 2014. 03.24 31 Ա որոշմամբ ստեղծվել է ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ, որը մեծ դեր է խաղում և երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանման, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն ձևավորման գործում: Մարզում անցկացվել է մի շարք երիտասարդական միջոցառումներ՝ անցկացվել է համակարգչային դասընթացներ երիտասարդ ուսուցիչների հետ „Համակարգիչը և ինտերնետը դասապրոցեսում,, թեմայով, ՄԻԱՎ ՁԻԱՀ-ի, սեռավարակների, թմրամոլության, վերաբերյալ դասընթացներ, մասնագիտական

կողմնորոշման ՊՈԱԿ-ի հետ կազմակերպվել է «Ինչպես դիմել գործատուին», «Ռեգյումերի պատրաստում», «Գործատուին ներկայանալու», մասին դասընթացներ, Աշտարակի Սք. Մարիանե եկեղեցու և Օշականի երիտասարդաց միության հետ համատեղ նշվել է եկեղեցական բոլոր տոները՝ Տիարն Ընդ Առաջ, Սուրբ Սարգիս, Չատիկ, Վարդավառ, Խաչվերաց, ԵԱՅԿ գրասենյակի հետ համատեղ դասընթացների շարք «Երիտասարդների իրավունք», «Աշխատանքային իրավունք», Բնապահպանական միջոցառումների շարք, UMCOR կազմակերպության, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ անցկացվել է թրաֆիքինգի վերաբերյալ դասընթացներ: Եռամսյակը 1 անգամ անց է կացվում խորհրդի նիստ, որտեղ քննարկվում են բազմաբնույթ ծրագրեր կապված մարզում երիտասարդների շրջանակում ակտիվ մասնակցության և գործունեության հետ:

«Արի տուն», ծրագրի շրջանակներում մարզում ամեն տարի հյուընկալվել են 25 սփյուռքահայ երիտասարդներ: 2014 թվականին «Արի տուն», ծրագրի շրջանակներում մարզի Օշական համայնքի բնակիչները հյուընկալել են 5 երեխա, Կարբի համայնքի բնակիչները հյուընկալել են 19 երեխա Վրաստանից: Սփյուռքահայ երեխաները հյուընկալվող ընտանիքներից վերադարձել են մեծ տպավորություններով և ջերմ հուշերով: Դրա վառ վկայությունը 2014 թվականի օգոստոսի 2-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետին հանձնաձև նորհակալագիրը Օշական և Կարբի համայնքների կողմից «Արի տուն», ծրագրին սատարելու համար և բարձր մակարդակով հյուընկալությունը կազմակերպելու համար: Ուսումնական տարվա սկզբին մարզի մանկապատանեկան սպորտի մասին օրենսդրության պահանջների հանաձայն մարզի հանրակրթական դպրոցների աշակերտները անցնում են պարտադիր բժշկական ամբուլատոր ստուգում, որի շնորհիվ աշակերտները բաժանվում են 3 խմբերի: Մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում ֆրզկուլտուրա առարկան դասավանդում են միայն մասնագետները:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում դեռևս կան այնպիսի դպրոցներ, որտեղ տարրական դասարաններում երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա առարկաները դասավանդում են տարրական դասարանների դասվարները:

2014 թվականի Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի՝ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային փուլերին մասնակցել են 108 երիտասարդ ընտանիքներ, որոնցից 1-ից-3-րդ տեղերը զբաղված 12 ընտանիքներ մասնակցել են մարզային փուլին: «Կորյուն», ռազմամարզական խաղերի տարածքային և մարզային փուլերին, մասնակցել են մարզի 87 դպրոցների 1800 աշակերտ:

Անցկացվել է ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկության ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը: Մասնակցել են 95 դպրոցների 3600 աշակերտ, շախմատի առարկայական հանրապետական օլիմպիադայի տարածքային և մարզային մրցումներին մասնակցել են մարզի բոլոր 119 դպրոցների աշակերտական թիմերը:

Անցկացվել է նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի Արագածոտնի մարզի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը, մասնակցել են մարզի 82 դպրոց՝ 782 աշակերտներով:

Մարզի դպրոցական թիմերը մասնակցել են ՀՀ դպրոցականների մարզական խաղերին՝ շախմատ, ֆուտբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, աթլետիկա և հանդբոլ մարզաձևերից:

2014թ. Կազմակերպվել և անցկացվել են շախմատի, ֆուտբոլի, ըմբշամարտի, վոլեյբոլի գյուղական համայնքների, քաղաքների և մարզային առաջնություններ:

ՀՀ Արագածոտնի մարզում գործում է շախմատի ֆեդերացիա մարզպետ Սարգիս Սահակյանի նախագահությամբ: 2013-2014 ուսումնական տարում ակտիվ շախմատի բնագավառում ունեցել ենք բավականին լուրջ հաջողություններ: 2013թ. Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան դպրոցի 8 տարեկան Արսեն Միքայելի Դավթյանը Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում մասնակցեց Եվրոպայի

պատանի շախմատիստների առաջնությանը: 2014 թվականին Արսեն Դավթյանը իր տարիքային խմբում Հայաստանի առաջնությունում գրավելով 1-ին տեղը իրավունք է ստացել սեպտեմբերին հարավ Աֆրիկյան հանրապետությունում անցկացվելիք աշխարհի, իսկ հոկտեմբերին Վրաստանում կայանալիք Եվրոպայի աշխարհի առաջնությանը մասնակցելու:

ՀՀ դպրոցականների „Դիպուկ հրաձիգ,,մ հանրապետական մրցումների տարածքային և մարզային փուլեր, Մելիքյուղի միջնակարգ դպրոցը անհատական հաշվարկով գրավել է 1-ին տեղը: «ՀՀ մարզերում նախադպրոցական և դպրոցական հիմնարկներում անցկացվում է «Սպորտլանդիա-2014» մարզական միջոցառումը:

2014թ. Մայիսին „Փոքր Միեր,, կրթահամալիրի նախաձեռնությամբ Աշտարակի Պերճ Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում կազմակերպվել է դպրոցականների երկօրյա ռազմամարզական հավաք:Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցը ցուսաբերել է լավագույն արգյունք:2014թ. մարզի 17 դպրոցների աշակերտները այցելել են „Փոքր Միեր,, կրթահամալիր, ծանոթացել սովորողների առօրյային, մասնակցել դասընթացներին:

ՀՀ Արագածոտնի մարզից 3 հայտ ներկայացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2014-2015թթ. ծրագրի մասնակցության,, :